

891 99

7-26

22 JUN 2007

1062

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ՊԱՐԿԵՏԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈԼԵԿՑԻԱ
10 NOV 2011

801.542-3

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

7-36

ՎԼԱՍՏԸ

ԿՈՄԴԵԶԸ

ՔՈԹՈԹԸ

891.99

7-26



ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ-ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՍՐՈՑԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ—1925

892903. 2013

75-2181

27944



Главлит № 2212 ТИФЛИС Тираж 1000
 Թիֆլիս, Ժ.Տ.Գ.Խ. Պոլիգր. Բ. 4-րդ ապ., Պուշկ. փ. № 3

Վ Լ Ա Ս Տ Ը

Զոփուռանց Ակոփի տղա—չոփուռ խեչանը,
 հենց վոր զինվորական ծառայությունից վերա-
 դարձավ, իսկույն ստրաժնիկ դառավ:

Ստրաժնիկ դառավ-չդառավ, դամշին առած
 քյասիբ գյուղացիների ջանին ընկավ, ու քյոխ-
 վա-քենդիսուղաներին թե ու թիկունք դառած՝
 սրան-հրան սկսեց երեկ-խորվել ու զամշու տա-
 կին չորացնել: Կոռ եր, թե բեգյառ. խարջ եր,
 թե պարտք, խեղճ մարդու վզիցն եր հանում:

Զոփուռ խեչան չդառավ նրանց զլխին, այլ
 կրակ ու փորձանք:

Խեչան...

Ի՞նչ խեչան... Նա դառել եր Խրիստափոր
 Յակուլիչ, վորի «թրի առաջն ել եր կտրում, յե-
 աեն ել»: Նրա սուաը պրիստավի ու մեծ դի-
 վանի առաջ—դորթից ել դորթ եր:

Մի հալա շենք ու շնորհքին մտիկ արեք,
 շենք ու շնորհքին ու արարքներին:

Բոյը—կարճ, մեջքը—կուզիկ, գլուխը—մեծ, աչքերը—մանր, շարժուն ու խորամանկ, գեմբը ծաղկատար, չեչոտ, կասես մկնակեր հացի յերես լինելը—կրծկրծորած, դար ու փոս, մուկը կերած արտի պես՝ տեղ-տեղ մազ բուսած: Բա նրա գեղին ու փայլուն կոճակները, դառով կարած պագոնները, կողքին կախ ընկած ու գետնին քաշ եկող թուրը, լեն չեքմեքն ու փափախի ճակատին կպցրած—յեզան աչքի չափ կողակողը...

Ու ես խլեզի չափ լղար մարդը, վոր մի գյուղի ծայրի դուրս եր գալի, լեղաճաք ելած գյուղացիք հենց եյին գիտում, թե մի ոխտը գլխանի հարամի լույս ընկալ:

— Ձեր տունը քանդվի, հրեն չոփուռի տղեն դալիս ա, տենաս ինչ վայ ա բերում մեր գլխին—ասում եյին գյուղացիք:

— Խի՛ յեք ըտհենց ասում, բալքի խեր բանի համար ա գալի—աստուում եր քյոխվեն:

— Խերը նրանից... Չոփուռ Խեչանիցը—խեհեր... Ասենք, գե քյոխվա ջան, խերը ընհենց բան ա, վոր մեկի համար խեր ա ըլում, մեկի համար—շատ: Իե բալքի քեզ համար խեր ա...

— Քամին խաբար կը տանի, կիմանա, միաներդ կը կտրի բերաններիդ դեմ կանի. ես մոր ծիծ կտրողի մասին խոսալ միք: Հո տենում եք որենքը—նրա գլխին ա, ինչքան գանգատ

եք անըմ, նրան դհա ավելի թևեր ա տալի: Թե կարում եք՝ աչքը ձեզ վրա քաղցրացրեք, թե չե հս... ձեններդ կարեցեք—ասում եյին ավելի խոհեմները:

Մեծ բունտի տարին *), յերբ գյուղ ու քաղաք խառնվել եր իրար, չոփուռ Խեչանը շատերի տները քանդեց, վորի համար նաչալնիկը նրա գոշին մի մեղալ կախ տվեց ու ոռճիկով քյոխվա նշանակեց:

— Ե հէյ, ա խալիս... Խեղքներդ թոփ ալեք թոփ. դուք հենց եյիք գիտում, թե թագավորը թախտիցն ընկած... Հենց եյիք գիտում, թե ել վառտ չիկած... Հրես ե... Վլաստը յես եմ, յես... Վլաստն ես դամշին ա ու ես յում-ըուղը...

Յեվ քյոխվա Խեչանը, վորի անունը գյուղացիք Վլաստ եյին գրել, ել ավելի կատաղած, ել ավելի գաղաղած—սկսեց ճնշել գյուղացիներին:

Նրա հին, գետնափոր տան տեղը, հիմի մի յերկհարկանի քարաշեն տուն եր կանգնած, գլուխը «կարմիր ժեշտով» ծածկած, իսկ պրիտավն ու նաչալնիկը նրա մշտական հուրերն եյին:

*) 1905 թ.

Հո մենակ ինքը չէր վրաստ. նրա տղեն ել եր վրաստ, նրա շունն ել, կատուն ել: Ո՞վ կհամարձակվեր նրա յեզան ու կովի քեֆին դիպչի, կամ նրա հավին քիչ անի, եշին—թոշ ասի... Խի՞, վրաստը—մեռել եր...

Գյուղացիք սրտամորմոք խուլ հառաչում էին.—

— Ա՛խ... Յարաբ են ի՞նչ որ կլինի, վոր ես վրաստի չուլը փորի տակն ընկած տենանք... Յարաբ ետ որը կգամ...

Ու եդ սրը—յեկավ:

— Հեղափոխություն... Հեղափոխություն... Իշխանությունը հիմի բանվորների ու գյուղացիների ձեռքին ե... Կորչեն քյոլպեն, պրիստապն ու աղալարները...

Եսպես ցնծությամբ ու աղմուկով մի քանի բանվորներ յեկան Բաղվից, վորոնց միացան քյոլպավա խեչանի ձեռով բանտարկված ու ազատված աղաները:

Գյուղն իրար անցավ:

— Վճրտեղա վրաստը, վրաստը վճրտեղ ա, բերեք դատաստանն անենք...

Վլաստին բռնեցին:

Ուզեցին տեղն ու տեղը սպանեն, բայց մեկ ել վորոշեցին բանտարկեն:

Վլաստին—գոմը գցեցին:

Տունը—առան: Մի մասում ուկոմն ու յաչեյկեն եր, մյուս մասում ժողովների տեղն ու գյուղի ընթերցարանը:

— Վլաստ... քեֆդ վոնց ա, վլաստ... Հարցնում եյին գոմի մոտով անցնողները:

— Վլաստ... Տեղդ ցուրտ ա, թե տաք...

— Վլաստ... Գեֆդ թե խարաբ ա, գրամաֆոնդ դարկենք մի քիչ ածա, իշի գոցը դահլեդ տարած կըլի...

Մի շաբաթից հետո Վլաստին ուղարկեցին կենտրոն, վորտեղից այլևս չվերադարձավ:

Բայց մինչև որս ել—գյուղացիք Վլաստի գոմի մոտից անցնելիս, ամեն անգամ կռանում են ու աղբածակից հարցնում. —

— Վլաստ... Տեղդ տաք ա...

— Վլաստ... Վճրտեղ ես Վլաստ...



Կ Ո Մ Դ Ե Զ Ը

I

Գզիր Առուշանի աստղը թեքվեց են որից, յերբ Խորհրդային իշխանությունը գյուղ մտավ։ Բոլշևիկներն եկան-չեկան, ինչ վոր հին դուլ-լուղչի կար՝ դուրս արին։ Գզրությունից դուրս արին և Առուշանին։

Քսանմեկ տարի գյուղի գզիրն եր նա։ Ոխտը քյոխվա յեր փոխել նա ու ինքը միշտ անշարժ իրեն տեղումն եր։ Գյուղն առանց մարդու կարելի չեր յերևակայել, բայց առանց գզիր Առուշանի—յերբեք։

Ու հիմի... հիմի ջրիցը ցամաքն ընկած ձկան նման բերանը սուտ բաց ու խուփ եր անում, թուքը կուլ տալի ու չեր կարում թե ձեն հանի։

Մի ժամանակ «սաղ գեղի տեր» գզիր Առուշանը, հիմի մաշված լուսնյակի պես մեջքիցը կեռացած, ունքերը կախ, ման եր գալի գե-

ղամիջում, հիշելով իր անցկացրած որերը, յերբ ինքն ել մարդ եր մարդամիջում։

Գզիր Առուշանը շատ աղաչանք-պաղատանք արավ Յաչեյկային ու Ռեկոմին, վոր իրեն մի հասարակ ծառայություն տան. բան դուրս չեկավ։

— Ախրը, Ռեմիո ջան, դու հո գիդաս, վոր յես մի խեղճ ու անշառ մարդ եմ. գզիր եմ ըլել ելի. գզիրն ինչ ա, թե նրա արարքն ինչ ըլի. թե քյոխվի, յա թե յասաուլի ու աբեշչիկի յեկած վախտը վորբեքի կնանոնցից հավից-ձվից առել եմ նրանց ըռեխը պցել, զրա համար հո ինձ կախ չեք տալ. թե սրա նրա վրա ճղճղացել եմ ու քյասիբի ձին ու յեղը կոռ վարպել, բա վոնց անեյի, ուժս նրանց եր պատում, համ ել պրիստավի դամշին թիկունքս քրքրում եր... Խի՞ յեք չորի հետ թացն ել երում. բա մեղք չեմ... Ամեն անգամ դիմում եր գզիր Առուշանը — Ռեկոմի նախագահին։

— Վերեից լտհենց ա կարգադրած, — սառը պատասխանում եր Ռեկոմի նախագահը. — մեր ձեռին իրավունք չկա. վոր տեղովդ մին վոսկի ել ըլես—ել յետ հին դուլլուղչի յես...

— Այ, քանգվի քու թախտը, Նիկալա՛յ, վոնց վոր քանգվեց ու իմ տունն ել հետը քանգեց... Հառաչում եր գզիր Առուշանը ու մեծ գը-

լուխը տմբտմբացնելով գնուտ տերտերի մոտ դար-
դահալ ըլելու...

Ամառվա մի օր, յերբ վողջ դյուղը հանգուսն
եր ու ամեն մինը մըջյունի պես մի ծեղ եր
քարշ տալի դեպի տուն, վոր ձմեռն ապրի,
են գործի յեռ ու զեռի ժամանակը, յերբ տանը
մենակ պառավ կնանիքն ու կատուներն եյլն
մնացել, շրջկոմի քարտուղարը գյուղերը շրջա-
գայելուց վերադառնում եր իր տեղը, յերբ
դյուղամիջից անցնելիս նկատեց, թե ինչպես մի
մարդ, յեկեղեցու սլափին կպած ծառի տակին,
«հ» տառի նման կուշ եկած—քնած է:

— Այ մարդ, ո՞վ ես. ես աշխատանքի ժա-
մանակ, յերբ քիչ է մնում քարերն ել մարդ
չինենք, գործի դնենք, դու քնում ես...

Գլիր Առուշանն եր, վորը ձայնից վեր թը-
ռավ ու տեսնելով շրջկոմի քարտուղարին դի-
մացը, ձիու վրա, իրեն նախատինք կարդալիս,
բերանը բաց, սառած մնաց: Նրա աչքերի բի-
բերը զարմանքից ենպես լայնացան, վոր այդ
ըռպեյին նա ավելի նման եր բուռի, քան գլիր
Առուշանին: Նա շատ լավ գիտեր, թե ինչպես
խիստ է ընկեր Ոսթյանը ծուլիների ու անգործնե-
րի նկատմամբ, և մի ըռպե մտածելով, թե ինչ-
պես կը վարվեր պրիստավը նման դեպքերում,
քնազգաբար թիկունքը քորեց:

— Գեղ չեմ սսո՞ւմ, այ մարդ, ո՞վ ես, ին-
չո՞ւ յես ես հունձ ու քաղի ժամանակ պարապ
գեղամիջում վեր ընկած...

— Յես... յես ես գեղի գլիրն եմ, Առու-
շանը. հունձ անել չեմ գիտում, քսանմի տարի
գլիրութիւն եմ արել, լավ դուլուղչի յեմ ըլել,
վոչ փեշակ եմ գիտում, վոչ ել ռանչաբուռ-
թիւն... հմի յել մնացել եմ պարապ, Ռեմկոն
եւ մի դուլուղ չի տալի... Ել ըստեղ քնիլ չեմ...
ես մինը բախշի... կմկմաց նա:

— Եգուց առավոտը վաղ, կգաս ինձ մոտ,
—ասաց քարտուղարն ու ձիու գլուխը թեքելով
ձամբան շարունակեց:

Գլիր Առուշանը սարից թոլ ելածի պես
շմամ մնացել եր տեղը նստած: Նրա աւանջ-
ները թշուծում էյին, լղար յերեսի մորթին տեղ-
տեղ թռչկոտում եր, մեռելի պես սառել եր, ու
քնձուռ բեխերի մագերը կառան փշերի նման
ցցվել էյին. խելքը չեր կարում հավաքի, կասես
թե գլխումը դուռնա-դհոլ ածելիս լինեյին:

Մի ըռպե միայն նրա միտքը պարզվեց. ու-
գեց վաղ տա, հասնի քարտուղարին ու աղա-
չանք-պաղատանք անի, վոր իրեն չկործանի,
բայց վտանքը կասես իրենը չլինեյին. փետացել
ու անշարժացել էյին: Ուղեց բղավի, բայց մի
անտեր խուխի կտոր կատկին դեմ ընկավ ու

քիչ մնաց խեղդեր: Նա չէր կարողանում յերևակայել այն պատիժը, նրա մեծութունը, վոր եզուց ստանալու յեր քարտուղարից: Լավ կը լիներ, յեթե բանը վերջանար թակելով ու մի շաբաթ բանտարկելով: Բայց յեթե նրան ուղարկեն քաղաք...

Նա յերևի շատ յերկար կըմնար անշարժ ու մոլորված նստած, յեթե հանկարծ կինը չճչար, թե յերեխեն թոնիրն է ընկել:

«Պակասս էս եր», — գլուխը թափ տալով ասաց զգիր Առուշանն ու վազեց տուն:

II

Շրջանային կոմիտեյի քարտուղար ընկեր Ռոյանին ներկայացավ հին, պատառոտած շորերով, կղահան ելած արեխներով, գլուխը համարյա չեքի զաթն ընկած մի մարդ ու աղիողորմ ձայնով ասաց. —

— Երեխես թորոնն ընկավ, բախշի, ել գեղամիջումը քնիլ չեմ...

— Ո՞վ էս, ի՞նչ էս ուզում, — զարմացած հարցրեց քարտուղարը:

— Յես գզիր Առուշանն եմ. են վոր երեկ գեղամիջումը քնած վախտս վրա հասար:

— Հա... դու են պարապ մարդն ես... նըստիր, նստիր:

— Ել քնիլ չեմ. ել գեղամիջումը քնիլ չեմ...

— Կսիր. դու ասում ես պարապ էս ուղուղուղի յես ման գալի՞...

— Հա, քե մատաղ, ընկեր Ռոյան ջան. ինչ ուղուղ ուղում էս տնւր. թեկուղ ինձ վեր կալ, վոր ձիուղ թիմար անեմ...

— Լավ: Գիտե՞ս ինչ. էս աշխատանքի ժամանակ ազատ մարդ չկա, իսկ մեզ հարկավոր է, վոր ձեր գյուղում մի մարդ լինի, վորը լավ ճանաչի բոլոր ջահեղներին, վորոնք զինվորական ծառայության տարիքի յեն, վոր նրանց գանի, հավաքի ու մեզ բերի: Դու ձեր գյուղի ջահեղներին լավ էս ճանաչում...

Գզիր Առուշանի գեմքը պայծառացավ:

— Վայ, յես քու արևին մատաղ, ընկեր Ռոյան ջան. էտ ել խոսք ամ, թե ճանաչում եմ... Յես մեր գեղի մեծից — պուճուրի ծնված թիվը հենց գիդամ, վոր բսկի իրանց հերն ու մերն ել ընհենց չեն գիդալ: Զիմի կնուսքն ել յես չեմ կերել...

— Դե, յես քեզ նշանակում եմ ձեր գյուղի կոմգեղը. գնա ու քեզ տեսնեմ, թե ինչ կանես:

— Ել խոսալ մի, յես գիդամ մնացածը: Հենց անեմ, հենց անեմ վնր... իրանք-իրանց վոտներով մոտդ գան: Դու մենակ ինձ ասա, թե իմ ուղուղի անուռն ի՞նչ ա:

— Կոմդեզ: Գնաս բարով:

Գզիր Առուշանը դուրս յեկավ ուրախ զըվարթ: Նա թռչում էր դեպի տուն և ուրախութեանից քթի տակ յերգ ել էր մրմռում: Նրա մեջքը մի քիչ կարծես դրստվել էր:

Ի՜նչ ծրագրեր չկազմեց ճանապարհին, ել ի՜նչ մարդ ասես, վոր չդառավ. գնաց, հասավ մինչև Յերևան, նրան նազրադ տվին, փող բախշեցին, անունը գաղեթներում գրեցին, գովեցին, մինչև անգամ յաչեյկայումս ընդունեցին... ել վոր մեկն ասեմ...

Ճամբի կեսն անց էր կացել, հասել Արդամա ջրին:

Շողից երված ու քրտնած յերեսը լվացավ, չոփ-չոփ արավ, մի լավ ել խմեց են պատվական ջրից, հովացավ, մոտիկ ծառի տակին նստեց թե քիչ հանգստանա... քունը տարավ: Քնեց:

Մին ել— ոճի կծածի պես վեր թռավ ու առաջին բանը, վոր միտն ընկավ, ետ իր նոր դուլլուդի անունն էր... Մի քիչ զոռ տվեց հիշողութեանը, կոմ... կոմ... արավ ու տեղը սառավ: Մոռացել էր:

— Վսնց էր են անտերը... հարց տվեց ինքն իրեն... Հ՞ը... կոմ... կոմ... մեջք յեզ ել կար, յեզ ել... կոմ... յեզ... Հե, ըսհե չի... Վսյ քու թարս բախտին ու թարս սատանին ինչ

ասեմ հա... Էս ինչ ոյին եկավ գլուխս... Վսյ քու տունը քանդվի, Առուշան, վոնց վոր քանդվեց... Հմի յես վոր ջուրն ընկնեմ... Ըսհե զուլլուղչունն ո՞վ կը պահի... Վսյ քու իշի ախոռումը քնած տունը բրիչակ ըլի հա...

Նա վեր կացավ ու կոմ կոմ. . անելով ճամբա ընկավ ու յերբ գլուդի ծայրին հասավ, նոր նկատեց, վոր փոխանակ իրենց գլուղը գնալու, յես ե գառել ու հասել են գլուդի ծայրին, ուր վոր գտնվում էր ընկեր Ոսյանը:

Նա կանգ առավ ու միտք արավ— գնա՞ քարտուղարի մոտ, թե չե: Ախր գնա— ի՜նչ ասի, վոնց ասի, թե մտահան ե արել, թե ճամբին քնել ե: Հրե հա... հրեն՝ սյ, են տանն ա կենում ընկեր Ոսյանը, տենաս հիմի ինչ բանի յա... Գրում ա, խոսում ա... Ախ, երեսի նրան, վոր նա գիտում ա... Տենաս ես գլուղում ապրող մի մարդու վոր հարցնի— կիմանա՞ անունը... Պետք ե վոր գիտենա ես գեղացիք կը գիտենան. չե՞ վոր ընկեր Ոսյանը ըստեղ ա կենում. նա ասած կրլի... Չե... վորդիան կիմանան. գեղացի չե՞ն... Են լավ ա, գնա ու հենց Ոսյանին իրան հարցնի... Անբախտութեանն ամեն մարդու կպատահի...

Եսպես ինքն իրեն հետ կռիվ անելով, վերջապես վճռեց ու գնաց:

Տեղ հասավ, տեսավ տան դուռը բաց: Փափախը վեր առավ ու քարտուղարի վտանների տակ փովելով բղավեց.

— Անումս մտիցս ընկել ա, ընկեր Ռոյան. ել քնիլ չեմ. միտս կը պահեմ—անսանումս ի՞նչ ա...

Քարտուղարն ապշեց:— Գիժ ես, ինչ ե. ի՞նչպես թե անունդ մոռացել ես:

— Հա... հա... քե մատաղ, անումս մատահան եմարել, յես գզիր Առուշանն եմ, համա անունս մտիցս ընկել ա...

— Դե անունդ Առուշան ե ելի. ել ի՞նչ ես գոռում...

— Վայ Առուշանին թաղես դու, պրծնես... են անումս ե, ե՛ն անումս, վոր դու յես զրել, դու, են վոր ետոր տսեցիր... բա ինձ ճանաչում չե՞ս... իմ դուլլուզի անումը...

Քարտուղարը նոր հասկացավ բանի ելուժյունը. նոր ճանաչեց գզիր Առուշանին ու նոր գլխի ընկավ, վոր խոսքը վերաբերում ե կոմգեզին:

— Կոմգեզ...

— Հա... Ողորմի քու հորը... Կոմգեզ... Ասեց գզիր Առուշանն ու ենպես դուրս նետվեց սենյակից ու վազեց, վոնց վոր արջի ձեռքից փախած լիներ:

Ամբողջ ճանապարհին վազելով, միայն մի բան եր կրկնում... Կոմգեզ, կոմգեզ, կոմգեզ, կոմգեզ...

Մուլթն ընկնում եր: Ճանապարհին նա պատահում եր դաշտային աշխատանքից վերադարձողներին, բայց վոչ մեկի հետ չեր խոսում: Իսկ ով վոր նրան «բարի յերեկո» եր ասում, նա պատասխանի փոխարեն «կոմգեզ, կոմգեզ» եր ասում ու վազում:

Տուն հասավ,

Կնիկ, աչքդ լիս—կոմգեզ եմ դառել, կոմգեզ... Թագա շորերս ու չեքմեքս հանի...

Մյուս առավոտ, գզիր Առուշանը նոր չուխան հագին, սրբած սապոգներով հպարտ-հպարտ ու գլուխը վեր ցցած ման եր գալի գյուղամիջում:

Կոմգեզ եր...



Ք Ո թ Ո թ Ր

I

Են իրիկունը բանվորներին հանրակացարանը ինչ-վոր արտակարգ ուրախության մեջ եր:

Հավաքվել էյին, շրջապատել նորեկին: Ամեն մինը կարոտած հարց ու վորձ եր անում իրենց տուն ու տեղից, մալ-դովլաթից, սար ու դաշտից: Տանից ինչ վոր ստացել էյին, մեջ տեղ բերին ու գյուղի տան հոտը հանրակացարանն ընկավ: Թվաց թե գյուղումն են, իրենց հարազատների մոտ, ոջախի շուրջը բոլորած: Տրամադրությունները բարձր, կշկշում էյին նրանք ու հիշողություններ պատմում. ապա սկսեցին խառը լեզուներով յերգեր ու մանիներ յերգել, ուրախանալ ու պարել:

Լուսաբացին գործարանի շշակի սուլոցի հետ, ամենքն ել շտապ գործի գիմեցին, միայնակ թողնելով գյուղից յեկած Գասպարին, վորը հանրակացարանի ծանր ու խեղդող ոգից նեղվելով՝ դուրս եկավ պատշգամբ. բայց եստեղ ել մի

պարզ արև, կանաչ խոտ կամ ծառ ու թուփ չեր յերևում: Սև մառախուղի նման, մազութի գոլորշին ու գազն եր կանգնած պայծառ արևի ու մաքուր ոգի տեղ, իսկ գետինը՝ սև ցեխ:

— Բա ըստեղ ապրել կըլի... Ես սև ցեխի մեջին... Հլե մի կանաչ խոտ ել ա կա վոչ, թե վրեն պորտիկ ըլես... Հլա... հլա, հլա ես ծառերին, ծառերին, սրանք ել են սև, սրանք ել... Ենա սև աշխարհը վոր ասում են, հալբաթ ես ա ելի... մտածում եր Գասպարը տխուր ու մոռահոգ, յերբ գործարանի կառավարիչը հեռվից նկատեց նրան՝ իր մոտ կանչեց:

Գասպարը ձեռաց վագեց ու մտով դրասենյակ, ուր բացի կառավարչից, վոր մի խիստ դեմքով մարդ եր, և վորի խստությանն ավելի նպաստում էյին նրա կարտուզն ու կակարդը, և հագի լաջն—յուլստից կարած չեքմաները, մի քանի հոգի ել ուրիշներ կային, վորսնք մեր կարմրաթուշ, փափրիկ ու վոտն ու ձեռը պլնդ, հաղթանդամ Գասպարին, իր գյուղական անպաճույճ շորերով ու տրեխներով, մոթալ փափախը գլխին—տեսնելով՝ հոհացին:

— Ես քոթոթը վորտեղից գտաք—Սերգեյ Սրկադիչ...

— Ի՛սկ վոր քոթոթ, — կամաց մըթմըթաց Սերգեյ Սրկադիչը:

Գառապարը թեև մի քիչ շփոթվեց նրանց վերաբերմունքից, բայց գլուխը չկորցրեց: Նա իրեն հավաքելով, համարձակ կանգնեց ու բարձր ձայնով ասաց.—

Յեա մարդ եմ. քոթոթը՝ արջի ձագն ա. թե դուք տեսել չեք, յես հլե իրան ել եմ տեսել, իրան մորն ել:

— Հա՛ ա՛... Տեսել էս... նորից սկսեցին ա-վելի բարձր հռնալ: Մենք չենք տեսել, հենց գիտենք թե, քոթոթն ել մարդ է, մենակ քեզ նման մարդ...

— Յեա ձեր մատխարեն չեմ. աչքերը ցած գցելով վիրավորված ու վրդոված ասաց Գառապարը. թե բան ունեք, բան ասեցեք. քոթոթը քոլումն ա ըլում, համա յես գեղումն եմ ապրում, շատ ել թե քաղաք չեմ տեսել, հենց եք գի-դում, թե յես մարդ, մարդու տղա չեմ...

Կառավարչի համար միանգամայն անսպա-սելի լինելով «Քոթոթի» համարձակութունը և ինքնասիրությունը, կամաց սառտեց մյուսներին ու ինքն սկսեց հաբց ու փորձ անել:

— Ո՛ւր ես եկել քաղաք:

— Յեկել եմ աշխատանքի. գեղը սով ա. կար-կուտն արտերը տարավ. յեկել եմ մի քանի կա-պեկ աշխատեմ, տուն դարկեմ, բալքի մի հնարով ձմեռնահան ըլենք, սովից կոտորվենք վոչ. գա-

րունքին ել յես կգնամ գեղը, մեր վար ու ցա-նին:

Կառավարչի զարմանքն ու հետաքրքրու-թյունն ավելի շատացավ, լսելով «Քոթոթ»-ի պարզ ու կտրուկ պատասխանը:

— Իսկ յեթե գործ չլինի, ի՞նչ պետք է անես...

— Յանի խի՞ չի ըլիլ վո՛ր... Բա ես յեքա քաղաքումը յես կարալ չե՞մ մի բանի կենամ...

— Եստեղ աշխատելը շատ դժվար է, շատ... փողն ել քիչ են տալիս, ավելի լավ է նորից գյուղ վերադառնալ:

— Ձե... յես դատարկ ձեռով գեղը չեմ գնալ-բա իմ նամուսին ի՞նչ ասեմ, մեր տանն ինչ ջու-ղաբ տամ...

— Ոհո՛... Ես Քոթոթը նամուս ել ե ունեցել... նորից հռնացին գրասենյակի ծառայողները:

— Ի՞նչ աշխատանք կարող ես կատարել, հաբցրեց կառավարիչը:

— Հլե ի՞նչ վոր ուզես:

— Որինալ. կարո՞ղ ես ես սենյակը շալա-կել. քմծիծաղ ավեց Սերգեյ Սրկադիչը:

— Ձե, աղա, ետ մինը գժար ա, համ ել դա մարդու բան չի. համա ես ոթախումն ինչ վոր կա, վոր շաղիս դնես հա, ճպրտորելով կը տանեմ. եղբան ուժա կալառի:

Բարձրացավ ընդհանուր ծիծաղ:

— Կարող ես յերգել... յերգ ասել գիտե՞ս, հարցրեց ծառայողներէց մինը:

— Հա. շատ լավերից գիտամ, կուզես թուրքերեն, կուզես հայերեն:

— Ձե, չե, ոսերեն յերգի, ոսերեն. միշտ մեկ ուրիշը:

— Ռսերեն ել թե կարաս հա, են ել դոս ասա. կծու պատասխանեց Գասպարը:

— Լավ կոթեց մեր տղա... ցածր ձայնով ասաց Սերգեյ Արկադիչը:

— Դե յերգի, յերգի, տեսնենք վո՞նց ես յերգում:

Գասպարը զիլ ու բարձր ձենով սկսեց. —

«Հոռոմ, Հոռոմ, հոռոմել ա յարըս,

Վարդը դռնին—թոռոմել ա յարըս»:

Ընդհանուր հռնուոցն ստիպեց Գասպարին ընդհատելու իր յերգը, և վերավորված՝ թողնելու գրասենյակը:

— Շատ աչքաբաց տղա յե յերևում. ասաց նրա յետեից կառավարիչը:

II

Անցավ մի տարի: «Բոթոթը» (եղպես եյին կանչում ամենքն ել Գասպարին, վորից ինքը

չեր նեղանում, ասելով թե՝ «եսքան գազանների մեջ մի քոթոթ ելա պետք ե լինի») գործարանի աչքի ընկնող յերիտասարդ բանվորն եր. նրան սիրում եյին բանվորները. ակնածում եր կատավարիչը, իսկ գրասենյակային մանր-մունր ծառայողները՝ քաշվում եյին նրանից:

Նա համարձակ եր, ճշմարտախոս, ուղղամիտ ու ազդեցիկ:

Գասպարը մտքից հանեց գյուղ գնալու գաղափարը, իր Աննային բերեց մոտը, և ամբողջովին նվիրվեց գործարանային կյանքին:

Ճիշտ ե, նրա կարմիր թշերը վաղուց կորցրել եյին իրենց գույնը, փափլիկ մարմինն արդեն վոսկրացել եր, սակայն դրանց փոխարեն, նրա միտքը մարդկել եր և ուղեղը հասունացել:

III

Մի ուր նրանց գործարանը մտավ մի ինչ վոր ոռւս բանվոր:

Իվան Կուզմին եր նրա իսկական անունը, բայց նա ապրում եր Տիմոֆեյ Միկուլինի կեղծ անցագրով: Աքսորական եր. հեռու տեղից: Վերին աստիճանի զգույշ եր իր խոսակցության միջոցին, և ավելի պատասխանում եր գիմազծերի, ձեռքի, գլխի կամ աչքերի շարժումներով, քան լեզվով:

Նիհար եր նա. դեզնած ու տանջված դեմ-
քով. գլուխը կախ, շարունակ իր աշխատանքին.
խուսափում էր կառավարչի կամ ագմինիստրա-
ցիայից վորևե մեկի հետ խոսակցելուց. պատա-
հած դեպքում ել՝ հազիվ մի-յերկու բառ կփո-
խանակեր նրանց հետ, վորից հետո սկսում էյին
ինչ վոր ջղային ցնցումներ: Գասպարը ծանո-
թանալուց հետո, շատ շուտ մտերմացավ նրա
հետ, և իմանալով, վոր Տիմոֆեյը բնակարան
չունի, տարավ իր սենյակը, ուր մի անկյուն
հատկացրեց նրան:

Տիմոֆեյը շատ խելոք ու գիտնական մարդ
էր, վորը զարմանալի բաներ էր պատմում Գաս-
պարին՝ բանվորական ու գործարանային կյանքից:
Տիմոֆեյը շատ զրասեր էր. նա շարունակ կար-
դում էր, և այդ նոր տեսակի գրքերից, վորոնց
նմանը Գասպարը դեռ չէր տեսել ու կարդացել,
տալիս էր նրան ևս կարդալու:

Տիմոֆեյն ազատ ժամերին զրուցում էր
Գասպարի հետ, բացատրում նրան չհասկացածը
և խոսում ու հասկացնում բանվորների շահա-
գործման մասին. թե ինչպես հաղարավոր բան-
վորներ փողի — կապիտալի գերին են դարձել,
թե ինչպես գործարանատերերը կեղեքում են
նրանց, և ինչպես ապորինի կերպով նրանց
աշխատանքը, հալալ քրտինքի վաստակը յուրա-

ցնում ու շուայլում անխնա, թե ինչպիսի հալա-
ծանքներ են տեղի ունենում կառավարության
կողմից՝ բանվորական կազմակերպությունների
նկատմամբ և այլն:

Գասպարի առաջ մի նոր աշխարհ բացվեց...

Նրա անհանգիստ ու բողոքող հոգին սկսեց
փոթորկվել, իսկ մշուշապատ ուղեղում մի փայ-
լուն միտք ծագեց՝ Տիմոֆեյի հետ միասին կազ-
մակերպել բանվորներին:

Սկսեցին:

— Գործարանն ինչ վոր անհանգստանում
է.— մի որ իր մոտ կանչեց «Բոթոթին» Սերգեյ
Արկադիչը ու խոժոռված դեմքով հայտնեց նրան:

— Ի՞նչ անեմ պարոն. պահանջում են, վոր
ռոճիկները ժամանակին արվի, և աշխատանքի
ժամերն ել կրճատվեն:

— Կրճատվեն... կրճատվեն... յես ձեզ բո-
լոթիդ կկրճատեմ:

— Կկրճատեք — գործը կդադարի:

— Դու ել հենց այդ ես ուզում ելի, Բո-
թոթ: Այդ ամբողջը դու ես անում, դու, քո
մատն ե խառը... Յես հենց առաջի որից զգա-
ցի, վոր դու համարձակ ես ու քեզ հետ գործ
ունենալը վտանգավոր է:

— Յես շատ անվատ մարդ եմ, պարոն.

յես վոչինչ չեմ անում, բացի այն, ինչ արդարությունն է պահանջում:

— Արդարությունը պահանջում է, վոր մեզ խեղդեք հա... գործարանը կանգ առնի... Դե, պատասխանիր. հետո դուք ինչպես պիտի ապրեք, յեթե գործարանը փակենք. հը, ինչպես... Յես քեզ բռնել կտամ, գյուղը կաքսորեմ...

— Շատ ել լավ կանեք. վաղուց է գյուղ չեմ գնացել, կարոտել եմ. հեգնեց «Քոթոթը»: Բայց միևնույն է, իմ հեռանալով կամ ինձ հեռացնելով բան չի դուրս գալ. նրանց պահանջն արդարացի է:

— Դուքս կորի անպիտան Քոթոթ. արդարացի է. մեկ ել դու ես արդարացի... Արդարացին այ, բռնեցքն է:

— Հա. եդ մեկը ճիշտ է. բայց չմոռանաք, վոր մեր բռնեցքներն ավելի շատ են. ասաց Գասպարն ու դուքս յեկավ:

IV

Գործադուլ եր:

Ընդհանուր մեծ գործադուլ:

Բոլոր գործարանները դադարել էին աշխատելուց:

Բանվորներն ութ ժամյա աշխատանքի որ էին պահանջում:

Գործարանատերերը գլուխները կորցրել էին:

Վոստրիկաններն ու լրտեսները փնտրում էին գլխավոր ղեկավարներին:

Մայիսի մեկին, առավոտյան ժամը 5-ին, արշալույսի կարմիր շողերի հետ, խումբ-խումբ բանվորները դուրս եկան քաղաքի լայն հրապարակներից մինը: Ուժեղ ու զիլ ձայնով թնդաց յերգը. — «Դե յեղ, գործավոր, վոքի յեղ մարտակոչ»... փոքրիկ խմբի ձայնին արձագանքելով, քաղաքի զանազան մասերից սկսեցին մանր խմբերով միանալ բանվոր-գործադուլավորներին:

Քաղաքն իրար անցավ:

Հոսանքը ղիմեց դեպի գործարանները:

Ամենից առաջ գնում եր «Քոթոթը», ձեռին կարմիր դրոշակը, վորի վրա խոշոր տառերով գրված եր «Ութ ժամյա բանվորական օր»:

Վոստրիկանությունը հրացանազարկերով ցրեց ցուցարարներին:

Գասպարին, Տիմոֆեյին ու մի քանի ուրիշների ձերբակալեցին ու աքսորեցին Սիբիրի խորքերը:

Տարիներ անցան:

Գասպարի ու Տիմոֆեյի սկսած գործը չմեղավ, մանավանդ, վոր նրանք հեռու Միբրիլից շարունակ գրում էին իրենց ընկերներին պրոքետարիատի կռիվի ու նրա հաղթանակի ուղիների մասին:

Ընդհանուր գործը, վորի շուրջ համախմբվել էին շատերը—ծավալվում էր և ավելի նորասուր մարդիկ գրավում:

Քաղաքներ ու գյուղեր կապվեցին իրար հետ: Շղթան ողակվում էր ու յերկարում, սակայն այս ամենը—գետնի տակ, ծածուկ, խոնավ ներքնատան նկուղներում, Սերգեյ Արկադիչի, նրա նմանների ու վոստրիկանություն աչքից գուղունի:

Քոթոթն եկել է, Քոթոթն եկել է... շատ խորհրդավոր փափսում էին իրար ականջի—Սև քաղաքի բանվորները և հավաքվում մի գաղափար հավաքատեղի, յերբ այդ մասին իմաց տվին Սերգեյ Արկադիչին:

— Ախ, այդ Քոթոթը... զայրացած առամները կրճատացնում էր Սերգեյ Արկադիչը... Թե մի ձեռք կընկնի. Տես, քանի-քանի իրեն պես

քոթոթներ ծնեց, վորոնք հիմի հանգիստ չեն տալիս վոչ մեզ, վոչ ել թագավորին:

— Վոչինչ, Սերգեյ Արկադիչ, վոչինչ... հանգստացնում եր նրան քաղաքապետ Բորիսովը, իր թավ ու յերկար բեխերը վոտրելով: Մենք նրանց ահա այսպես, կըխեղդենք, կըկախենք, վոտնատակ կըտանք այդ սրիկաներին, այդ անհավատ ու դավաճան լրբերին... Ասում եր նա, բռնեցքն ողում թավ տալիս ու վոտը գետնին զարկում, ավելի զրնգացնելով շպորները, կարծես զրանով ահ ու սարսափ եր ուղում տարածել:

— Շատ են շատացել, շատ... Միխայիլ Վասիլիչ, զրանք մի որ մեզ կլավեն:

— Մենք այդ Քոթոթին կը բռնենք ու կը կարենք:

— Ո՛ւշ է, Միխայիլ Վասիլիչ, ուշ... Ի՛նչ նշանակություն ունի մի հատ Քոթոթ բռնելը. ախ մամեն մի բանվոր Քոթոթ է, ավելի կամ սակաւ չափով:

— Ուրեմն՝ բոլոր բանվորներին պետք է լախել և վոչնչացնել—վճռեց Բորիսովը և դիմեց զործի:

Նա շատ յերկար փնտրեց Քոթոթին, վորի համար շատ շատերին հալածեց ու աքսորեց, բայց վոչինչ չոգնեց:

Քոթոթը չկար ու չկար. կամ ինչպես ինքը
Բորիսովն էր ասում, «Քոթոթն ինքը վերա-
ցել էր, բայց մտել բոլոր բանվորների մեջ ու
նրանցից ամեն մեկին Քոթոթ դարձրել»:

VI

Այսօր պատահեցի «Քոթոթին»:

Նա թեև ծեր, բայց աշխույժ էր, ժիր և ա-
ռույգ:

Բանվորական հսկա շարքերի առաջ կանգ-
նած, կարմիր դրոշմ ձեռքին պինդ բռնած, լե-
զուով էր ի ն Տ ե Ր Ն Ա Յ Ի Ո Ն Ա Լ Ը:

Մոտեցա:

— Կեցցե Քոթոթը. — կամաց փսփուացի ա-
կանջին:

— Կեցցեն քոթոթները. — բարձր ծիծաղեով
պատասխանեց նա:

Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ


Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

1. Մինիստրներ. — Կոմ. 1 գործ. գինը . . . 50 կ.
2. Վարստը, Կոմդեզը, Բոթոթը. — գինը . . . 20 կ.

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

1. Զարթնող գյուղը. (պատմվածքների ժողովածու)
2. Վո՞րտեղ ե... (Նոր վեպ)
3. Հաղթանակ. — Պիես 3 գործ.
4. Ճշը վեր ե, քան մահը. — Կոմ. 3 գործ.
5. Առակներ.



914
ԳԻՆԵ 20 ԿՈՊ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՆՍՏԻԹԱՆԿԱԿԱՆ ԿԱԶՄԱՆԴԱՐԱՆ

Հեղինակի Հասցեն՝

Тифлис Площадь Свободы, 3.

17
ՀՀ Ազգային գրադարան



NL0323865

27444